

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ՓԱՇԱ ԶՐԱՔԵԱՆ



ԼՈՒՍԱՒՈՐ դէմը մ'է ահա հայկական արիւնագիր հորիզոնի վրայ. պանծալի գաւակ մը հայ ազգին, անգուգական գործիչ՝ որ իր հասուն փորձառութեամբ, իր դիւանագէտի տաղանդով, իր անբասիր հայրենասիրութեամբ մեծ դեր մը խաղալու կոչուած էր մեր նորածագ պատմական ասպարէզին մէջ:

Ծնած ի Գահիրէ 1842 Ապրիլ 15ին, որդի Արթին Պէյ Զրաքեանի, որ Եգիպտոսի հայ կաթողիկէ գաղութին ամենէն ազնուական ու ազգասէր անձն էր, Եագուպ Արթին իր նախնական ուսումն ու կրթութիւնն առաւ Կ. Պոլսոյ Վենետիկի Միթիթարեան Հարց վարժարանին մէջ, ուրկէ անցաւ մեր նոյն ժամանակի Մուրատեան վարժարանին մէջ, մեր ազգային

մտաւոր լուսաւորութեան առաջնակարգ կեդրոններէն մին, բարձրագոյն ուսումններն առնելու և կրթութեւն համար: Ուշիմ մանուկը քիչ ժամանակի մէջ իր փութաշանութեամբ, խիստ կարգապահութեամբ և բարի վարքով փայլեցաւ իր բոլոր աշակերտակիցներուն մէջ: Իր գիտնական դաստիարակը Հ. Գ. Վ. Այվազովսքի, ամէն ջանք թափեց որ գիտութեան լոյսին հետ, հայրենիքի սէրն ալ խոր դրոշմէր անոր ազնուական սրտին մէջ, գուշակելով թէ ապագայ հայ Փաշաներուն հոյը այդ յարկին ներքեւ պիտի պատրաստուի:

Հայրը՝ Արթին Պէյ՝ իր զաւակը ֆրանսերէն լեզուի մէջ դեռ աւելի հմտացնելու և անոր մտաւորական պաշարը ճոխացնելու համար՝ զայն դրաւ Նոթր Ծամ տ'Օթէյլի դպրոցը, ուր մնաց մինչեւ 1868:

Դեռ չաւարտած իր ուսումնական շրջանը, վախճանեցաւ դեռ առոյգ հասակի մէջ իր բազմավաստակ հայրը, որով պատանին Արթին զրկուեցաւ իր բնական պաշտպանի խնամքներէն: Սայիտ Փաշան՝ Եգիպտոսի փոխարքան, — որ երկիրը եւրոպականացնելու ձեռնարկած էր, և զոր յաջողութեամբ պսակելու համար բոլոր յոյսը իր հաւատարիմ և ձեռներէց հայ հպատակներու վրայ դրած էր, — Փարիզէն Եգիպտոս կանչել տուաւ խոստումնալից պատանին, որու սիրալիր ընդունելութիւն մ'ըրաւ, և զանիկա յանձնեց թուրք ուսուցչի մը, որպէս զի անոր թուրք, պարսիկ և արաբ լեզուներն ուսուցանէ, առանց այդ լեզուներուն անկարելի ըլլալով պետական պաշտօններու մէջ մուտք գտնել:

Չնայելով իր լեզուական ու գիտական հարուստ պաշարին, Եագուպ Արթին Պէյ ծարաւի էր իւրացնելու եւրոպական

մեծ երկիրներու մշակոյթը, ու կը զգար թէ արդի Եգիպտոսի վերանորոգիչներէն մին պիտի ըլլար, ուստի մօտէն պէտք էր շփուիլ անոր առաջնակարգ հաստատութեանց հետ, որոնցմէ կատարեալ օրինակներ պիտի մտցնէր օր մը հին Փարաւոններու երկիրը: Այս նպատակով երկար ճամբորդութիւններ կատարեց Խալիլոյ, Աւստրիոյ, Գերմանիոյ, Ֆրանսայի և Անգլիոյ մէջ, ուր կատարեալագործեց այդ երկիրներու բնիկ լեզուները, ուսումնասիրեց անոնց քաղաքակրթութիւնն և յատուկ խնամքով հետեւեցաւ ընդհանուր մէն մի ազգի իրաւագիտութեան դասընթացքներուն, հմտացուց ինքզինքը գլխաւորապէս այդ աշխարհներուն գրականութեան, բարոյագիտութեան, պատմութեան և պետական կազմի մանրամասն ծանօթութեանց մէջ:

Վերադառնալով Նեղոսի հովիտը, Սայիտ Փաշայի յաջորդը՝ Խամայիլ Փաշա, խորաթափանց և հեռատես միտք, աչքէ չվերապեցուց թաքուն գանձը: Ան 1873ին Արթին Պէյը բարձրացուց Սանիէի աստիճանին, և դաստիարակ կարգեց զայն իր որդւոց՝ իշխան Խալահիմ Հէլմիի՝ հանգուցեալ Սուլթանին, և իշխան Մահմուտ Ֆուատին Նորին Վեհ. Եգիպտոսի Սուլթանին որ անցեալ տարի վախճանեցաւ, ինչպէս նաեւ Մուսթաֆա Փաշա Ֆազլի որդւոց՝ Խալահիմ Ֆազլի և Հիւսէյին և Հիւսսամ-Էլ-Տիին իշխանաց:

Խտիւրդ գնահատելով իր զաւակներու դաստիարակին բարձր արժանիքը, 1878ին զինք անուանեց իր եւրոպական բաժնի Բարտուղարը: Սոյն պաշտօնին մէջ ցոյց տալով հաւասարապէս թէ՛ սրամտութիւն և թէ՛ անձնանուէր գործունէութիւն, Խտիւրդ ամենամեծ համարման արժանացաւ, որով Ելեւմտից նախարարութեան մէջ կալուածական տուրքերու Ֆանձնախումբին մէջ իբր Բարտուղար պաշտօնավարելու կոչուեցաւ:

Այլեւս ասպարէզը բաց էր իր առջեւ: Ակսեալ 1880 թուականէն իր անունը ոսկի առերով կապուած է Եգիպտոսի քա-

ղաքական, բարեգործական, գիտական, գեղարուեստական, տնտեսական ֆանձնախումբերուն հետ. երկար է մի առ մի թուել շարքը բոլոր այն շարժումներուն, որոնք ծնունդ կ'առնէին իր անխոնջ ուղեղէն, և որոնք վերջին աստիճանի կատարելութեան հասան: Ի միջի այլոց յիշենք իր անդամակցութիւնը աշխարհագրի ֆանձնախոզովի մը, որով մեծ Հայը իմաստուն դեկլարութեամբ մեծամեծ ծառայութիւններ մատուցեց Եգիպտական տէրութեան իր սրամիտ և հնարագէտ հանճարով, յաղթելով արմատացած դժուարութեանց, երբ նկատի առնենք որ Եգիպտոս այդ ժամանակին տետրներ չունէր քաղաքին վիճակին, հարուստներն ու ֆէլլահները զանազան շահերու տեսակէտէն մղուած՝ կը մերժէին ճշգրտելէ, առաջինները՝ իրենց հպատակները, և վերջինները՝ իրենց որդիքը:

Սոյն պաշտօնավարութեանց միջոցին ցոյց տուած աջողակ և հաւատարիմ գործունէութեամբ Եագուպ Արթին Պէյ դարձաւ Խտիւրդ ամենամտերիմ բարեկամն և աջակիցը, և փոխարէն իր բազմաթիւ ծառայութեանց և անխոնջ ջանքերուն՝ բարձրացաւ փաշայութեան բարձրագոյն աստիճանին, և ստացաւ հետզհետէ Մեծ Ժապաւէնները, ինչպէս որ ունէր յունական, աւստրիական, ֆրանսական, ուսական, իտալական և բրուսական տէրութեանց բազմաթիւ շքանշաններ: Հուսկ՝ իբր փառապսակ իր բազմապիսի արժանիքներուն՝ Սուլթանը պսակեց զինքը Եգիպտոսի Նոր Կարգաւ՝ Նեղոսի մեծ ժապաւէնով, պատուանշան որ կը համառօտէ ու կ'ամփոփէ իր մէջ պետական Մեծ Հայկազնին փառքը:

* * *

Եագուպ Արթին Փաշայի անձին մէջ կարծես ի մի գուգուեր էին ամէն հազուագիտ ձիրք, որոնցմով ան փայլեցաւ ոչ միայն իբր պետական նշանաւոր դէմք, այլ նաեւ իր մէջ երեւան եկաւ գիտնականի մեծ միտք:

Հայ Փաշան արդի Եգիպտոսի մտաւոր յառաջադիմութեան մարմնացումն եղաւ, քառորդ դար մը վարելով Հանրային կըրթութեան պետական Դեր — Քարտուղարի պաշտօնը։ Իրեն կ'երթայ կազմակերպչի փառքը Եգիպտոսի Նախակարգ, Միջնակարգ երկսեռ Վարժարաններուն, ճոխացնելով և բարձրացնելով անոնց կրթական մակարդակը, ինչպէս նաեւ իրեն յստակատես և անողոր ուղղութեան գործերն են հաստատութիւնը Եգիպտական Նախաստիճանի (Baccalauréat) և Վարժապետանոցի՝ որպէս զի երկրին ծոցէն դուրս բերէ մտքի մշակներ։ Գեղարուեստից սիրող, Եագուպ Արթին Փաշան հիմնեց Նեղոսի հովտին մէջ արուեստից և ձեռարուեստից վարժարաններ, որոնք բարձր ի գլուխ կը պարծին Բուրգերու աշխարհին մէջ։ Եգիպտական Կաճառը, վերահաստատուած՝ 1799ի Նարուէոն Պոնաբարտ զօրավարի հիմնածին աւերակներու վրայ, պանծանօք կը յիշէ Հայ Փաշային անունը որ արժանաւոր նախագահը մնաց երկար տարիներ։

Պուլազի արուեստից պետական դպրոցը՝ անձնական ձեռակերտն է Եագուպ Արթին Փաշայի, ինչպէս նաեւ Եգիպտոսի անկապտելի պարծանքը կազմող հնութեանց թանգարանն և կառավարական Ազգային գրատունը, — և ո՞ր հնախօսը չի գիտեր այդ երկու անունները, — Եագուպ Արթին Փաշայի եռանդուն ջանքերուն պտուղներն են։

Իրրկ անդամ Արարական Արուեստի պահպանութեան մասնախումբին, ամէն ջանք թափեց որ արաբական արուեստի հրաշակերտները — անոր տիրապետութենէն մնացած Եգիպտոսի Մզկիթներն և շիրիմները — կանգուն մնան, որ կործանման սպառնալիքի տակ կը գտնուէին, և որոնք դարերով սպասեցին Հայու մը վերանորոգիչ ձեռքին։ Այդ ձեռքն եղաւ դարձեալ որ հիմնեց Արար արուեստի թանգարաններ, ուր խնամքով հաւաքուեցան Միջին դարու արաբական ոճին դիւրակորուստ սքանչելի առարկաներ, զոր Եգիպտոս գոռոզարար կը ցուցադրէ Եւրոպայի առջև իբր Արեւելքի

նախկին քաղաքակրթութեան անբաղդատելի բեկորներ։

Թէվֆիք Խտիւր, որ իր իշխանութեան միջոց (1879-1892) մի միայն Եագուպ Արթին Փաշան գտած էր յանձնելու համար Եգիպտոսի բախտը, 1886ին զինքը նշանակեց գլուխ հրեշտակութեան մը, որ առաջին անգամ Եւրոպայի առջև Եգիպտոսը պիտի ներկայացնէր Վիեննայի մէջ Արեւելեայց ութերորդ Համաժողովին։ Այս փափուկ պաշտօնը, վստահացուած իրեն ուղղամտութեան և խոհականութեան, և որ այնչափ պատուարեր է Եգիպտոսի, որչափ պարծանք հայ ազգին, յաջողութեամբ կատարեց նա ի մեծ գոհունակութիւն իր տիրոջ։

Քաղաքական տնտեսագիտութեան մասնագէտ, առանց սակայն աչքէ վրիպեցնելու որ անթերի վարպետ մ'ալ էր թուագիտութեան և պատմական ճշգրտուն մէջ, այնպիսի վարկ մը տուաւ երկրագործական մասնագիտութեան, որ առանց ղեղեկելու կրնանք հաստատել թէ Եգիպտոսի արդի ծաղկած մշակութեան մեծագոյն աշխատաւորն ինքն եղած է։ Առ այս վկայ են իր առաջնակարգ երկերը, ուր իրենց սեղմ և ախորժելի ոճին հետ երեւան կու գան խորհողի, գիտնականի խմաստալից տեսութիւններ։ Կարուածական Սեպհակաւոն Նեքիպտոս, Հասարակաց Կրթութեան Եգիպտոսի մէջ, Եգիպտական Ֆոլքլորը, Նպատակաւ Ուսումնասիրութեան Կերպարանի Արեւելքի մէջ, Արեւելքի Սոստանի մէջ։ Ուղեղի այս բոլոր հմտալից հատորները ֆրանսերէն լեզուով են, զոր ան կը գրէր ու կը խօսէր անմասն ճկունութեամբ, ինչպէս մայրենի լեզուի պէս քաջ կը հասկնար, կը խօսէր և կը գրէր արաբերէն, իտալերէն, անգլիերէն, գերմաներէն, թուրքերէն լեզուները, և խոր հմտութիւն ունէր հին յունարէնի, լատիներէնի և պարսկերէնի։

Առանց երբեք պատուոյ պաշտօններու հետամուտ ըլլալու, անոնք են որ իր ետեւէն կը վազէին միշտ։ Եգիպտոսը նեղ կու գար իր համբաւին, ան անցաւ Եւրոպա, ուր ամենէն խլեց հիացում և աւանանդ։

Սկովտիոյ երկու քաղաքները Էպլըտին և Սէնդ-Էնտրուս, իրենց նոր շուք մ'աւելցնելու համար՝ իրաւագիտութեան Ուսուցչապետ անուանեցին զինքը իրենց հին Համալսարաններուն։

Ի հարկէ՝ կարելի չէր որ այսչափ զբաղումներու մէջ կարենայ մէկը պարապել նաեւ ազգային մատենագրութեամբ, սակայն Եագուպ Արթին Փաշան գիտցաւ իր բաժինը բերել մայրենի լեզուին և գրականութեան։ Ազատ ժամերուն մէջ, իրեն միակ սիրելի զբօսանքն եղաւ հետաքրքրուիլ հայ ձեռագիրներով, զոր իր անձնական ծախքով ազատելով կորստաբեր փողիներէն, աւերիչ տարրերէն և օտար ձեռքերէն, վեհանձնօրէն նուէր կ'ուղարկէր զանոնք ի ձեռագրատուն Ս. Ղազար կղզեակի՝ զոր մասնաւոր գուրգուրանքով մը կը սիրէր, և որու քանիցս այցելած է իր ազնուական գերդաստանով։ Միայն Ս. Ղազարի Հայրերը գիտեն այն թանկագին ծառայութիւնները՝ զոր Հայ Փաշան կատարեց է անուղղակի ի նպաստ հայ մատենագրութեան։

Եթէ Եագուպ Արթին Փաշան պետական կեանքի մէջ իսկ փայլած չըլլար, իր գրական անխոնջ գործունէութիւնը բաւական պիտի ըլլար զինքն անմահացնելու։ Թէ ան ո՞րչափ սատարած է ուսումնական յառաջադիմութեան և կրթական գործին, բաւ է յիշել, որ երբ ան Եգիպտոսը արդի խստապահանջ հիմերուն վրայ դնելէ վերջ, իր հրաժարականը մատուցեց Հանրային Կրթութեան Նախարարութեան, Ամին Սամի Փաշան խղճի պարտք համարեց իրեն գնահատական նամակով մը յայտնել ամբողջ Եգիպտոսի առջև, ինչ որ այդ երկիրը կը պարտէր հայ գիտնականին։

«Յետ ծառայելու Կրթութեան շուրջ քառորդ դար մը, Վսեմ. Եագուպ Արթին Փաշա, իբր տէրութեան Երկրորդ Քարտուղար Կրթական Նախարարութեան մէջ, իր հրաժարականը տուաւ 1906ի Հոկտեմբեր 28ին։

Նա իր բոլոր ջանքը թափեց այս ժամանակամիջոցի մէջ ուսուցման եղանակին մէջ կարգ մտցնելու համար և ոչ մէկ փոյթ չինայեց բարձրացնելու զայն այնպիսի աստիճանի մը վրայ որ հաստատեց անոր հիմքը։ Գիտցաւ իւրա-

քանչիւր Նախարարի վստահութիւնը այնքան վստակիլ, որ Հանրային աշխատութեան և Հանրային Կրթութեան երկու Նախարարութեանց վերայ եղող նախարարը վերջին Պաշտօնարանիս մէջ շաբաթը երկու անգամ միայն կ'երթար։ Այնքան լիազօր իշխանութիւն ունէր Եագուպ Արթին Փաշա այս նախարարութեան մէջ, և իրօք առաջին ինքը ի գործ դրաւ մանրամասնօրէն կանոններու կարգաւորումը, և ուսուցման արդի դարուն պատշաճող ոճ մը տուաւ. ինքն է որ թելադրեց ներկայացնել ամէն տարի ինքնակալին՝ տեղեկագիր մը պատկերող՝ ուսուցման վիճակը ի Նախարարութեան, և կանոններ հաստատեց վկայագիրներու և տիպիլմներու նկատմամբ։ Գարձեալ առաջին ինքը եղաւ որ հեղինակներու և թարգմանիչներու վարձք մը սահմանել թելադրեց. ոչ ոք կ'անգիտանայ այսպիսի հաստատութեան մը օգտակարութիւնը։

Արդ, ի փոխարէն Վսեմ. Փաշային կատարած նախկին ծառայութիւններուն և այլ Մատակարարութեան՝ իր պաշտօնակիցները հանգանակութիւն մը կատարեցին տօնախմբելու համար իր յիշատակը։ Սակայն Նորին Վսեմութիւնը, իր սեփական վեհանձնութեամբ փափագ յայտնեց որ հանգանակուած գումարին շահը սահմանուի օգնելու ամէն տարի Երկրորդակարգ Ուսմանց վկայականը ընդունող առաջին թեկնածուներէն անոնց որ շարունակել կը փափագին իրենց ուսումը բարձրագոյն վարժարանի մը մէջ»։

Կան Հայեր, որոնք հազիւ թէ բախտին շնորհիւ կամ միջավայրին բերմամբ՝ փայլուն դերքի մը հասնին, իրենց առաջին գործը կ'ըլլայ անմիջապէս ուրանալ հայ լեզուին հետ անունն ալ։ Եթէ երկար է շարքը այդ գաճաճ և փոքրամիտ Հայերուն, բարեբախտաբար անոր կուշտին կը բարձրանայ ոսկեշար գիծը այն Հայոց, որոնք լոկ իրենց անձնական արժանիքով հասնելով ամենաբարձր դիրքի, պարծանք սեպեցին իրենց կոչուելու հայ ազգի հաւրազատ գաւակները։

Եագուպ Ա. Փաշայի ազգային գործերուն մէջ պատմական պիտի մնայ Սահմանդրութիւնը որով օժտեց Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Հասարակութիւնը — նախաձեռնութեամբ ողբ. Բուզանդ Մասրաֆի, Մու-

1. Այս տողերը Արար բնագրէն առնուած բառական թարգմանութիւնն են, զոր Սերովքէ Եպիս. Գաւթեան Ֆրանսերէնի փոխած է իր «Généalogie et Biographie de Son Excellence Jacoub Artin Pacha» գործին մէջ, ապգ. ի Գահիրէ, 1917. էջ 12-13.

րատ — Ռափայէլեան Վարժարանի պար-
ծանքներէն մին — և վաւերացնել տուաւ
Եզրիպտ. կառավարութեան կողմէն:

Աւելի մեծ եղաւ իր դերը Հայ Բարե-
գործական Ընդհանուր Միութեան հեմար-
կութեան մէջ՝ Նուպար Փաշայի կողքին:

« Վսեմ. Եզրուպ Արթին Փաշան ոչ
« նուազ հեղինակաւոր ու բարձր անձնա-
« ւորութիւն մը, կ'ըսէ Ս. Պարթեւեան,
« աշխատութեան իր կարեւոր բաժինը
« ունեցաւ Բարեգործականի հիմնարկէքին,
« իսկ իբրեւ Փոխ — Ատենապետ Կեդր.
« վարչ. ժողովին՝ տարիներէ ի վեր ոչ
« մէկ ջանք կը խնայէ օր ըստ օրէ ըն-
« դարձակելու համար անոր սահմանները:
« Նորին Վսեմութիւնը միացումի առաջին
« կապն ու օրինակը եղաւ իր զաւանակից
« մեր եղբայրներուն և միութեան միջեւ,
« հրաւիրելով զանոնք զալ բոլորով ա-
« նոր գերազանցապէս մարդասիրական ու
« համազգային իտէալին շուրջ» (Եզրիպտ.
Տարեցոյց. Ա. տ. 1914, Գահիրէ),

Հայ Փաշայի ներքին կեանքն ու բա-
րոյական նկարագիրը պարզապէս օրինա-
կելի էր:

Եթէ իր հոգեկան բարձր ձիրքերուն և
յարատեւ աշխատութեան շնորհիւ հասաւ
այնքան բարձրութեան, սակայն ան մնաց
պարզ ու ընտանի ամենուն հետ, որոնք
կարծես չէին կրնար հաւատալ թէ ինքն
ըլլայ Եզրիպտոսի Վարիչը:

Վեհութեան ու ծանրութեան հետ ճկուն
էր և զիջող: Զգուող շողորթութենէ,
եղաւ միշտ ճշմարտախօս, ուղղամիտ, ա-
նաչառ և անկեղծ, այդպէս իրեն յան-
կուցանելով իր բարեկամներն ու թշնա-
միները միանգամայն:

Ինք ընտանեկան կեանքի անթերի տի-
պար՝ բախտն ունեցաւ ամուսնանալու իր
սրտին և հոգւոյն վսեմ յատկութիւննե-
րուն զուգակից Օր. Իրամ Ալլահվերտի
հետ՝ շառաւիղ Հայ — Կաթողիկէ բարեօրոհմ
և մեծատուն ընտանիքի մը: Այս երջա-

նիկ միութենէն ծնան մէկմէկէ բարենշան
զաւակներ, Օր. Կատարինէ Աննա և Ար-
թին Արրահամ պէյ՝ որ, աւաղ, ծաղկա-
տի կտրուեցաւ մահուան գերանդիէն,
1897ին, խոր սուգի մատնելով իր հայրը՝
որ այլեւս անժառանգ կը մնար:

Այդ խոր վէրքին վրայ կ'աւելնային
յետոյ Կիլիկիոյ ջարդերը, որոնց ատեն իր
հայրենասէր սրտով՝ իբրեւ նոր Յովսէփ
Գեղեցիկ մը՝ բացաւ նա Եզրիպտոսի շտե-
մարանները, հոն ապաստան և հաց տուաւ
իր եղբարախոտ ազգակիցներուն, հոն սըր-
բեց արցունքը հարիւրաւոր հայերու, ինչ-
պէս աննախանձ ու մարդասէր կերպով
ըրած էր յետին Ֆէլլահին և այնպէս սիր-
ուած և պաշտուած Եզրիպտացուց սրտին մէջ:

Վսեմ. Եզրուպ Արթին Փաշա, իր հի-
ւանդութեանց, իր առաքինագարդ կողակ-
ցին անդարմանելի կորուստին մէջ անգամ
չկորսնցուց իր հոգեկան հաւասարակշռու-
թիւնը. այն վերջին ճգնաժամին կազդուր-
ուած Ս. Խորհուրդներով Եկեղեցւոյ՝ որու
հաւատարիմ զաւակը մնաց միշտ իր բո-
վանդակ կեանքին մէջ, տեսաւ պայծառ
հոգեւորութեամբ արեան քառսէն դուրս
ելլող ազատագրուած Հայաստանը: Ինչ-
պէս ուժգին տրոփեց իր սիրտը, որպիսի՝
հրճուանքով խայտաց իր հոգին դարերով
երազուած գաղափարին իրականացման
առջեւ: Եթէ բաժանումի դառն հարկը զլա-
ցաւ իրեն կենդանի Հայերուն հետ վայե-
լելու նորածագ արեգական մը ճառագայթ-
ները, գէթ միտքարուած կը փակէր իր
աչքերը, բանալու համար զանոնք մեռե-
լոց աշխարհին մէջ, իրր արժանաւոր նուի-
րակ մը աւետելու մարտիրոս Հայերուն՝ թէ
կանգնուած է ընդ միշտ ազատ Հայաս-
տանը:

Եւ այսպէս կեանքը կնքեց փառքով,
իրեն հետ տանելով բովանդակ հայութեան
սուգը, պաշտօնական Եզրիպտոսի յարգան-
քը և իր ձեռքին տակ երջանկացած մին-
չեւ յետին Ֆէլլահին սէրը:

(Բզմվպ. 1919, փետ.)

Հ. Ս. Տ-Մ.

ԾԵՐԱԿՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՄ ԵՐԱՄ

Իր ազգը խորապէս սիրող և անոր ամէնէն
անձնուէր և հաւատարիմ այս զաւակը ծնած
է Տրապիզոն 1851ին, որդի Յովհաննէս աղա
Երամեանի, որ Կիլիկիոյ ընտանեաց նաւե-
լուն հմուտ նաւապետն էր, և ատոր համար
իսկ Գափտան կոչուած:

Յովակիմ կամ Արամ, սրամիտ, ջանասէր
և իր զասընկերներուն մէջ ցայտուն իր բա-
րի վարքով, դեռ չաւարտած իսկ տեղւոյն
հայ կաթողիկէ հասարակութեան ծխական
վարժարանը 1866ին անցաւ Մուրատեան Վար-
ժարան բարձրագոյն կրթութիւն և ուսում
առնելու Մխիթարեան Հայրերուն քով՝ ու-
րոնք էին Հ. Հմայեակ Պապիկեան, Հ. Գ.
Զարեհանալեան, Հ. Գր. Մէրճանճեան և ու-
րիշներ: Արամ եթէ բախտաւոր եղաւ նման
ազնիւ հոգիներու խնամքն ու սէրը վայելե-
լու, նոյնքան ալ ինք եղաւ ազնիւ, բարի,
յառաջադէմ և ամենուն սիրելի:

Փրանկ — բրուսական պատերազմին հետե-
ւանքով 1870ին իր ընկերներուն հետ կը փո-
խադրուի Վենետիկ, ուր բախտը կ'ունենայ
վայելելու հայրական խնամքները Հ. Ի. Կիլի-
զեանի (յետոյ ընդհ. Աբբահայր և Արքեպս.):

Արամ 1872ին աւարտեց իր ընթացքը, և տես-
չութիւնը նկատելով անոր մտաւոր ու հոգեկան
բարձր կարողութիւնները, բացառիկ շնորհքով
մը՝ ի վարձ իր ազնիւ և բարի վարքին, զինք
ըրկեց Բատուայի համալսարանը Երկրագործու-
թեան ուսման՝ որուն սիրահար էր:

Ապա անցաւ Գաղղիա՝ Կրիսեօնի երկրագոր-
ծական վարժարանը և ստացաւ ճարտարագէտ-
հաշուագէտի վկայականը:

Կ. Պոլիս վերադարձին՝ նա վարեց պետական
պաշտօններ մէկմէկէ աւելի փայլուն յաջողու-
թիւններով: Նախ՝ իբր մասնագէտ հաշուագի-
տութեան երկրագործական ֆինիչ Անատոլի և
տուրքեան երկրագործական ֆինիչ Անատոլի և
Բուլղարի կողմերը, այնպիսի անձնուէր, խղճա-
միտ և հաւատարիմ գործունէութեամբ որ իր
վրայ դարձուց Պետութեան բարձրաստիճան ան-
ձերուն ուղադրութիւնը, և ասոնց յանձնարա-
ւորութեամբ Սուլթանը Արամ էֆ.ին կարգեց Նա-
խագահ Երկրագործութեան մասնագիտական
խորհուրդին, պաշտօն մը՝ որուն մէջ Արամ եւ



րեան բերաւ իր սրամիտ ու հնարագէտ հան-
ճարը և Օսմ. կայսրութեան երկիրները մեծապէս
բարւոյնեցան:

Արամ Երամի յանձնարարութեամբ և ծրա-
գրով էր որ Սուլթանն հաստատեց Հալլաքի
Երկրագործական մեծ վարժարանը, որ եղաւ
պանծալի գործ մը իր անուան և իսկական փառք
մը բովանդակ կայսրութեան: Երբ 1908ին հըռ-
չակուեցաւ Օսմ. Սահմանադրութիւնը, Երամ Պէյ
նոր խորհրդարանին մէջ Երեւակուտական ըն-
տրուեցաւ, դառնալով Նախարարութեանց շունչն
ու հոգին և ժողովրդեան բարօրութեան հոգա-
ծուն: Իր վայելած բարձր համբաւին համար էր
որ ընտրուեցաւ մին այն երեքներէն՝ որոնք
Եւրոպի բռնաւորին հաղորդեցին զահընկէցու-
թեան վճիռը:

Մեծ պատերազմէն յետոյ, Վսեմ. Ա. Երամ
պէյի առաջարկուեցան զանազան Նախարարու-
թիւններ Թէվֆիկ Հազգը և Հիւսէյն Հիւմի փա-
շաներու զահճին մէջ, սակայն ինք հեռատես
ու խոհեմ՝ մերժեց անոնց ստանձնումը:

Թէեւ ծանրաբեռնուած պետական հոգերով,